

# ԼՐԱՏՎԱՄԻՋՈՅՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ, ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

Զեկույց՝ լրատվամիջոցների  
ինքնակարգավորման  
միջազգային փորձի  
ուսումնասիրության  
արդյունքներով

---

Երեւանի մամուլի ակումբի մեր գործընկերը սույն հետազոտությունն անցկացրել է մեր կենտրոնի «Նոր մեդիա միջավայր-նոր խնդիրներ, նոր կարգավորումներ. հանուն Հայաստանում բազմակարծիք, որակյալ եւ թափանցիկ մեդիայի» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական հիմնադրամ հանուն ժողովրդավարության (EED) կազմակերպության ֆինանսական աջակցությամբ: Չեկոյցի բովանդակությունը կարող է չհամընկնել EED-ի տեսակետների հետ: Տեղեկատվության եւ կարծիքների համար պատասխանատու է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնը:

Ծրագրի մյուս կյութերն այստեղ են՝ **Mediametrics-**  
<https://www.regioncenter.info/hy/media-metrics>



«Ռեգիոն» հետազոտական կենտրոն



European Endowment for Democracy (EED)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉԼՄ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ -----	4
ՄԱՍՈՒԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐԸ -----	9
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ -----	13
ՄԱՍՈՒԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ-----	15
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	19

*Ինքնակարգավորման մարմինների կազմը*

*Տարբեր համակարգերի համագոյակցություն*

*Համակարգավորում. պլյուսներ և մինուսներ*

*Կամավո՞ր, թե՞ «պարտադրված»*

*Ինքնակարգավորմանը մասնակցելու խթաններ*

*Որակյալ լրագրությանն աջակցելու քաղաքականություն*

*Արդյո՞ք պետք է հրապարակվեն մարմինների փաստաթղթերը*

*Լրագրողների վարքագիծը սոցցանցերում*

*Լրատվամիջոցների ինքնակարգավորումը և թափանցիկությունը*

*Փաստերի ստուգում և ինքնակարգավորման մարմիններ*

*Կանոնագրերը խախտած ՉԼՄ-ների նկատմամբ վերաբերմունքը*

*Միջազգային համագործակցություն՝ ուղղված ՉԼՄ-ների ինքնակարգավորման խթանմանը*

*Կախվածություն հարակից ոլորտներից*

# ԲՈՐԻՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Երեւանի մամուլի ակումբի նախագահ

## ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ, ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

(Ձեկույց՝ լրատվամիջոցների ինքնակարգավորման միջազգային փորձի  
ուսումնասիրության արդյունքներով)

## ՉԼՄ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՉԼՄ ինքնակարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը<sup>1</sup> վկայում է, որ պատմական կտրվածքով համապատասխան կառույցների գործունեության ձևերն ու սկզբունքներն էապես փոփոխվում էին և դառնում ավելի բազմազան: Այսօր հայտնի Մամուլի խորհուրդներից առաջինը, որը ստեղծվել է Շվեդիայում 1916 թ., գործել է որպես «պատվի դատարան» և հիմնադրվել երեք հիմնական լրագրողական կազմակերպությունների՝ Ժուռնալիստների միության, Թերթերի հրատարակիչների ասոցիացիայի և Հրապարակախոսների ակումբի կողմից: Շվեդական Մամուլի խորհուրդը (Ֆինլանդիայում այն նույնպես իրենց ներկայիս խորհրդի «նախահայրն» են համարում, քանի որ կառույցը ներառում էր նաեւ ֆիններեն տպագիր մամուլը, որը լույս էր տեսնում այն ժամանակ Շվեդիայի կազմում գտնվող երկրի հատվածում) առաջնորդվում էր 1923 թ. ընդունված Էթիկայի կանոնագրով և սկզբում գործում էր լրագրողների և հրատարակիչների միջև հակասությունները կարգավորելու համար: Ընդ որում, խորհրդի գործունեության իմաստը ոչ թե աշխատանքային վեճերը լայն իմաստով լուծելն էր արհմիությունների նման, այլ, առաջին հերթին, լրագրողների՝ գործատուի պահանջները չկատարելու իրավունքը պաշտպանելը այն դեպքերում, երբ պահանջները հակասում էին Էթիկայի համաձայնեցված ստանդարտներին: Իսկ ինքնակարգավորման ժամանակակից մարմինները միանգամայն այլ գործառույթներ ունեն և հիմնականում կարգավորում են լրատվամիջոցների և հասարակության (լսարանի ներկայացուցիչների) հարաբերությունները:

<sup>1</sup> Ուսումնասիրության հիմնական մեթոդը 2022 թ. AIPCE 30 երկրներ ներկայացնող անդամների շրջանում փետրվար-մարտ ամիսներին անցկացված հարցումն է:

Մասնագիտական և ոլորտային միավորումների (ինչպես գործատուների, այնպես էլ աշխատակիցների) դերը Մամուլի խորհուրդների գործունեության մեջ առանցքային է մնում: Մինևույն ժամանակ, Մամուլի խորհուրդների հիմնադիրներ այսօր կարող են լինել հանրության լայն շերտեր ներկայացնող կառույցները (մարդու իրավունքներով, սպառողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող), ինչպես նաև պետական, այդ թվում՝ դատական մարմինները: Ավելի քիչ են նախադեպերը, երբ ինքնակարգավորման մարմինները ստեղծվում են անհատ լրագրողների կողմից (ինչպես ուկրաինական Լրագրողական Էթիկայի հարցերով հանձնաժողովի դեպքում է, որը ստեղծվել է 2001 թ. և 2003 թ. գրանցվել որպես հասարակական կազմակերպություն): Կան նաև նախադեպեր (օրինակ՝ Վրաստանի Լրագրողական Էթիկայի խարտիան), որոնք «ինքնահիմնվել» են որպես քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և զբաղվում են ոչ միայն բողոքների հիման վրա տեղեկատվական վեճերի քննությամբ, այլև իրականացնում են բազմապրոֆիլ մեդիա ՅԿ-ներին բնորոշ լայն տեսականիով գործառույթներ:

**Մամուլի խորհուրդները** (որոնք տարբեր անվանումներ ունեն, բացի վերը նշված վրացական խարտիայից, դրանք Մեդիա խորհուրդներ են, ինչպես Ռուսաստանում է՝ Մամուլի դեմ բողոքների հանրային կոլեգիան է, ինչպես Ուկրաինայում է՝ Լրագրողական Էթիկայի հարցերով հանձնաժողովն է և այլն) Եվրոպական մեդիա ավանդույթի կարևոր տարր են: Դրանք հատկապես լայն տարածում ստացան Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 428 բանաձևից հետո (1970), որը լրագրողներին խորհուրդ էր տալիս ստեղծել Էթիկայի կանոններ և Մամուլի խորհուրդներ: 1999 թ. հիմնադրված Եվրոպայի անկախ Մամուլի խորհուրդների դաշինքը<sup>2</sup> (AIPCE) միավորում է 32 ազգային ՄԽ-ներ, ներառյալ՝ Հայաստանի ՉԼՍ-ների Էթիկայի դիտորդ մարմինը: AIPCE-ում ներկայացուցչություն ստացած վերջին երկիրն արդեն 2022 թ. Լիտվան դարձավ: Մինևույն ժամանակ, Մամուլի խորհուրդներ ստեղծվել և գործում են նաև աշխարհի այլ տարածաշրջաններում, դրանցից որոշները (ավստրալիականը, նորգելանդականը, իսրայելականը, հարավաֆրիկյանը, կորեականը, մոնղոլականը, շրիլանկյանը և ուրիշները) Եվրոպական դաշինքի աշխատանքներին մասնակցում են ասոցացված անդամների կամ դիտորդների կարգավիճակով:

Փաստորեն, նույնիսկ Եվրոպայում AIPCE-ում ներկայացվածություն ունեն մայրցամաքի երկու երրորդից քիչ երկրներ, դրանց շարքերում չկան բավական խոշոր և զարգացած

<sup>2</sup> Տես՝ <https://www.presscouncils.eu>

մեդիա ոլորտներ ունեցող Լեհաստանը, Չեխիան, Իտալիան... Միևնույն ժամանակ, Բելգիան ներկայացված է երկու Մամուլի խորհուրդներով (առանձնացված լեզվական սկզբունքով՝ ֆլամանդերեն և ֆրանսերեն/վալոներեն): Խորը ներքին ճգնաժամի հետևանքով, 2014թ. Մամուլի դեմ բողոքների բրիտանական հանձնաժողովի գործունեության դադարից հետո, Միացյալ Թագավորությունը նույնպես ներկայացնում են երկու կազմակերպություններ՝ Անկախ մամուլի մոնիտորը (IMPRESS) և Մամուլի ստանդարտների հարցերով անկախ կազմակերպությունը (IPSO): Իսպանիան ներկայացված է ոչ թե ազգային, այլ Կատալոնիայի ռեգիոնալ Մամուլի խորհրդով: Եթե Բելգիայի դեպքում «ոչ ստանդարտ» իրավիճակը պայմանավորված է օբյեկտիվ հանգամանքներով (երկրի երկու հիմնական լեզուներով լրատվամիջոցների լսարանները տարբեր են), ապա մյուս դեպքերում պատճառը ինքնակարգավորման համակարգերի և մարմինների ստեղծման դժվարություններն են:

Ինչպես ցույց է տալիս իրավիճակի վերլուծությունը, եվրոպական բոլոր երկրներում այս կամ այն ձևով կան լրագրողների մասնագիտական Էթիկայի կանոնագրեր, ընդ որում բավական առաջադեմ, սակայն ինքնակարգավորման ինստիտուտների ստեղծումը հատուկ ջանքեր է պահանջում, որոնք միշտ չէ, որ կարողանում է գործադրել մեդիա հանրությունը, կամ էլ բավարար չափով չի գիտակցում դրանց կարևորությունը:

Այսպես, Մամուլի դեմ բողոքների բրիտանական հանձնաժողովը (Press complaints commission) ստեղծվել է 1953 թ. և բավական լայն տարածված կարծիքով՝ լրատվամիջոցների ինքնակարգավորման ամենահաջող օրինակն էր համարվում: Հանձնաժողովը, փաստորեն, դարձավ AIPCE-ի ստեղծման նախաձեռնողը, սակայն 61 տարի անց (2014թ.) ստիպված եղավ դադարեցնել իր գոյությունը սուր քննադատության պատճառով՝ մեդիա ինդուստրիայի և լայն հասարակության շահերը պաշտպանելու հարցում հավասարակշռությունը հօգուտ առաջինի խախտելու համար: Այս պատմությունը նման նախաձեռնությունների ճանապարհին հանդիպող բազմաթիվ ու բազմազան խոչընդոտների բարձրաձայն վկայությունն է:

**Մամուլի խորհուրդների արդյունավետ աշխատանքի համար որոշիչ գործոն է հենց լրատվամիջոցների սեփականատերերի (ղեկավարության), լրագրողների (սյուլթերի հեղինակների) և հանրության (լսարանի) շահերը հավասարակշռված դիտարկելու համար բանաձև գտնելու ունակությունը:**

**Ջեռեւաբար**, Եվրոպայի մամուլի անկախ խորհուրդների դաշինքի անդամ հանդիսացող ինքնակարգավորման մարմինների փորձի այս ուսումնասիրության նպատակները ոչ միայն մամուլի խորհուրդների և դրանց համարժեք կառույցների գործունեության տարբեր ասպեկտների<sup>3</sup> ամփոփումն է, այլև՝ (ինչը նույնպես կարևոր է նախաձեռնությունը խթանելու և վստահությունն ձեռք բերելու համար)

- զանգվածային տեղեկատվական արտադրանք ստեղծելու և դրա տարածման գործընթացում առաջացող տարբեր շահերի ներդաշնակ հաշվառման երաշխիքների ստեղծումը,
- ինքնակարգավորման տարբեր ինստիտուցիոնալ մոդելների համադրման նպատակահարմարությունը,
- պետության և այլ քաղաքական ինստիտուտների հետ հարաբերությունների ռեժիմի ստեղծումը,
- մասնագիտական և սոցիալական գործունեության հարակից ոլորտների հետ փոխգործակցությունը,
- փորձի փոխանակման և ՉԼՄ-ների ինքնակարգավորման ընդհանուր մոտեցումների ներդաշնակեցման համար միջազգային համագործակցության ձևաչափով մասնակցությունը:

Ինքնակարգավորման մարմինների նպատակները ձևակերպվում են որպես արտահայտման, տեղեկատվության տարածման և ստացման ազատության պաշտպանություն՝ հարգելով այս գործընթացի տարբեր կողմերի իրավունքները:

Մամուլի խորհուրդների ստեղծման իդեալին ամենամոտ մոդելն այն կազմակերպությունների ջանքերի միավորումն է, որոնք.

- ա) պաշտպանում են լրագրողների անկախ գործունեության շահերը, ներառյալ՝ սոցիալական ասպեկտը (լրագրողական արհմիություններ),
- բ) ներկայացնում են մեդիա բիզնեսի, ինդուստրիայի շահերը,
- գ) պահպանում են լրագրողական ստեղծագործության բարձր չափանիշները՝ մեդիա պրոֆեսիոնալների (անհատական անդամակցությամբ ասոցիացիաներ, ակումբներ) փոխադարձ պարտավորությունների միջոցով:

<sup>3</sup> Այնպիսի ասպեկտների, ինչպես՝ առաքելության որոշումը, հիմնադրման հարցերը, գործունեության կառավարման սխեմաները, բողոքներ դիտարկող մարմնի ձևավորման և որոշումներ կայացնելու մոդելները, ՉԼՄ-ների ծածկույթը, պոտենցիալ դիմորդների շրջանակը, ֆինանսավորման աղբյուրները և այլն:

Այստեղ խնդիրներ են առաջանում այն երկրների հետ, որտեղ չկան բոլոր երեք ուղղություններով կայացած կազմակերպություններ: Դրանցում, որպես կանոն, նախաձեռնությունը ստանձնում է երրորդ տեսակը: Բայց, միևնույն ժամանակ, հաջողության հասնելու համար այդ երկրին անհրաժեշտ է ներգրավել հեղինակավոր խաղացողների, ովքեր ազդեցություն ունեն առաջին երկու՝ չկայացած կամ ամբողջությամբ չկայացած ոլորտներում (պաշտոնական կարգավորող կառույցներ, բիզնես Էթիկային, որակյալ տեղեկատվական արտադրանքին նշանակություն տվող գործարարներ և այլն):

Ինքնակարգավորման մարմինների իրավական կարգավիճակի վերաբերյալ ընդհանուր լուծումներ չկան, քանի որ այս հարցը կախված է տվյալ երկրի օրենսդրական համակարգից և դրանց հիմնադրման և գործունեության կարգավորման մեջ պետության ներգրավվածության բնույթից: Դրանք կարող են լինել և՛ հիմնադրամները, և՛ հասարակական (ոչ կառավարական, ոչ առևտրային) կազմակերպությունները, և՛ հանրային իրավունքի իրավաբանական անձինք: Գործունեության արդյունավետ կազմակերպման համար զարգացած և քիչ թե շատ ռեսուրսներ ունեցող Մամուլի խորհուրդներից շատերն ունեն երկու հիմնական ստորաբաժանում՝ դա, պայմանական ասած, քարտուղարությունն է, որը զբաղվում է կազմակերպչական, հաղորդակցական, տեխնիկական հարցերով, և կոլեգիալ մարմինը (հանձնաժողովը), որն ուղղակիորեն զբաղված է բողոքների քննությամբ: Կան ավելի բարդ սխեմաների նախադեպեր (օրինակ՝ շվեդական ՄԽ-ն), որոնց մեջ, մասնավորապես, ներառվում է մեդիա օմբուդսմանը: Վերջինս իր աշխատակազմի օգնությամբ զբաղվում է քաղաքացիների և կազմակերպությունների բողոքների վերաբերյալ եզրակացությունների մշակմամբ: Եվ միայն բարդ, վիճահարույց դեպքերում ՄԽ-ին ուղղված դիմումները փոխանցվում են կոլեգիալ մարմնին: Այնտեղ կարող են ուսումնասիրվել նաև մարդու իրավունքների պաշտպանի եզրակացությունների հետ դիմողների անհամաձայնության դեպքերը:



# ՄԱՄՈՒԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Ավանդաբար Մամուլի խորհուրդները զբաղվում էին միայն տպագիր մամուլով: Համարվում էր, որ հեռարձակման ոլորտը կարգավորում է պետությունը՝ համապատասխան օրենքների և լիցենզիաների միջոցով: Դա հիմնականում պայմանավորված էր նրանով, որ ռադիոն և հեռուստատեսությունն օգտագործում էին սահմանափակ հանրային ռեսուրս, հատուկ պատասխանատվություն էին կրում իրենց արտադրանքի բովանդակության համար և կարող էին կարգավորող մարմինների կողմից պատասխանատվության ենթարկվել: Սակայն հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման և «սահմանափակ հանրային ռեսուրսի» թեզի արդիականության աստիճանական կորստի հետևանքով, Մամուլի խորհուրդների մեծ մասը վերջին քառորդ դարում սկսեց զբաղվել նաև հեռարձակող ՉԼՄ-ներով: Առավել շատ քննարկման ենթարկվեց օկլայն հարթակներն ընդհանուր ինքնակարգավորման շրջանակում ներառելու հարցը: Սակայն վերջին տարիներին հարցը նույնպես լուծվեց հոգուտ այն ՉԼՄ-ների շրջանակի ընդլայնման, որոնք հանդիսանում են բողոքների քննարկման պոտենցիալ օբյեկտներ: Համեմատաբար «երիտասարդ» Մամուլի խորհուրդներն ի սկզբանե ստեղծվում են իրենց գործունեության մեջ բոլոր տեսակի լրատվամիջոցներ ներառելու համար: Բայց, միևնույն ժամանակ, մնում են նաեւ ավանդական Մամուլի խորհուրդներ (ինչպես Գերմանիայում, Շվեյցարիայում, Բելգիայում, Նորվեգիայում, Իռլանդիայում և այլ երկրներում է): Դրանք շարունակում են գործել որպես տպագիր մամուլի ինքնակարգավորման մարմիններ:

Թեև լրատվամիջոցների ինքնակարգավորման համակարգերը բնութագրվում են որպես կամավոր հիմունքներով ստեղծված կազմակերպություններ, մի շարք փորձագետներ կարծում են, որ, դրանց արդյունավետությունը բարձրացնելու համար գործընթացում պետք է ներառվեն պետական մարմինները: Այդ թվում, առաջարկվում է ինքնակարգավորման մարմինների ճանաչման ինստիտուտի ներդրում և ՉԼՄ-ների օրենքների միջոցով նրանց գործունեությունը կարգավորելու որոշակի մեխանիզմների կիրառում: Այդպիսի մոդելները ստացել են «**համակարգավորում**» պայմանական անվանումը: Այս հարցի տարբեր մոտեցումների կոնկրետ դիտարկման համար անդրադառնանք որոշ եվրոպական երկրների փորձին, որը կարող է հետաքրքիր լինել Հայաստանում օգտագործելու տեսանկյունից:

**Դանիա** - Մասնավորապես, օրենսդրական մակարդակով ինքնակարգավորման ճանաչումը բնութագրում է Դանիայում կիրառվող մոդելի էությունը: «ՉԼՄ-ների պատասխանատվության մասին» ակտի համաձայն՝ այդ երկրի բոլոր լրատվամիջոցների բովանդակությունը և վարքագիծը պետք է համապատասխանեն ընդհանուր էթիկական ստանդարտներին: Համապատասխան կանոնների խախտման վերաբերյալ բողոքները կարող են ուղիղ կերպով ներկայացվել լրատվամիջոցին կամ Դանիայի Մամուլի խորհրդին: Նշված ակտի կիրառման ոլորտում հայտնվելու համար, լրատվամիջոցը պետք է գրանցված լինի խորհրդում: Ակտը կարգավորում է ՄԽ կազմի ձևավորումը: Մասնավորապես, այդ կազմում պետք է ընդգրկվեն նախագահը, փոխնախագահը և արդարադատության նախարարի կողմից նշանակված 6 անդամ: ՄԽ նախագահն ու նրա տեղակալը պետք է իրավաբաններ լինեն, իսկ նրանց թեկնածությունները արդարադատության նախարարին ներկայացնում է Դանիայի Գերագույն դատարանի նախագահը: Մամուլի խորհրդի երկու անդամի թեկնածություններն առաջարկվում են Դանիայի ժուռնալիստների միության կողմից, ևս երկուսին պետք է ներկայացնի լրատվամիջոցների ղեկավարությունը, մեկը՝ տպագիր, մյուսը՝ հեռարձակող: Մամուլի խորհրդի մնացած երկու տեղերը վերապահված են հանրության ներկայացուցիչներին, իսկ նրանց թեկնածությունն առաջադրում է Մեծահասակների կրթության խորհուրդը: Դանիական ՄԽ-ն ուսումնասիրում է այն գործերը, որոնք կապված են «առողջ էթիկայի» խախտման հետ, որոշում է կայացնում լրատվամիջոցի պատասխանի վերաբերյալ՝ ներառյալ պատասխանի բովանդակությունը, դրա հրապարակման ձևն ու տեղը: Խորհուրդը սահմանում է նաև բողոքի ուսումնասիրման ժամկետները և կարգը: Դանիական մոդելը կարելի է դիտարկել որպես կայացած համակարգավորման «դասական» օրինակ:

**Շվեդիա** - ՉԼՄ-ների ինքնակարգավորման շվեդական համակարգը գործում է զուտ կամավոր հիմունքներով. կառավարությունը որևէ մասնակցություն չի ունենում այդ գործընթացում: 1923 թ. ընդունված և 1994 թ. թարմացված Լրագրողական էթիկայի կանոնագիրը նպատակ ունի պահպանել բարձր էթիկական չափանիշները և նախատեսում է առաջին հերթին քաղաքացիների պաշտպանությունը նրանց անձնական կյանքին միջամտելուց, գրապարտությունից և նրանց վնաս տվող այլ տեղեկատվության տարածումից: Վերը նշված Գլխավոր մեդիա օմբուդսմենի ինստիտուտը Շվեդիայում ներդրվել է 1969 թ.: Այս երկրում Մամուլի խորհուրդը բաղկացած է 6 անդամից, որոնցից երկուսը հայտնի հասարակական գործիչներ են, երեքին պատվիրակում են լրատվամիջոցները, վեցերորդը, որը նախագահի պարտականություններ է կատարում և ունի որոշիչ ձայն, որպես

կանոն, հանդիսանում է Գերագույն դատարանի դատավոր: Սրանով պետության ներգրավվածությունը ինքնակարգավորման համակարգում սահմանափակվում է:

**Գերմանիա** - Գերմանական Մամուլի խորհուրդը ստեղծվել է 1956 թ. և մեծ մասամբ հիմնվում էր վերը նշված Մամուլի դեմ բողոքների բրիտանական հանձնաժողովի փորձի վրա: Սա անկախ կազմակերպություն է, որը 57,5%-ով ֆինանսավորվում է լրատվամիջոցների սեփականատերերի, 17,5%-ով՝ լրագրողների և 25%-ով՝ պետության կողմից: Վերջինիս շահագրգռվածությունն առաջին հերթին այն է, որ ՄԽ-ի շնորհիվ նվազեցվում է դատական համակարգի ծանրաբեռնվածությունը՝ կապված տեղեկատվական վեճերի լուծման հետ: Խորհրդի անդամ կարող են լինել միայն պրոֆեսիոնալ լրագրողները, որոնց թիվն ընդհանուր առմամբ 15-ն է (դաշնային հողերի քանակին համապատասխան), ՄԽ նախագահն ու անդամներն ընտրվում են 4-ից 8 տարի ժամկետով՝ ռոտացիան ապահովելու համար:

**Նիդերլանդներ** - 1960 թ. Նիդերլանդների Մամուլի խորհրդի հիմնադիրներ դարձան Ժուռնալիստների միությունը, Գլխավոր խմբագիրների ասոցիացիան, Ազգային լրատվական գործակալությունը, մի շարք այլ լրագրողական կազմակերպություններ, պետական կարգավորող մարմիններ: 2000-ականներին նրանց միացավ “Planet Internet” կազմակերպությունը: Խորհուրդը բաղկացած է 16 անդամից, որոնցից 8-ը ներկայացնում են լրատվական համայնքը, իսկ 8-ը՝ լայն հանրությանը: Ի տարբերություն, օրինակ, Դանիայի և Շվեդիայի, հոլանդական ՄԽ բողոքներ կարող են ուղարկել ոչ միայն առանձին քաղաքացիներ, այլև կազմակերպություններ, այդ թվում՝ առևտրային: Ինչպես մի շարք այլ երկրներում, այստեղ ևս Խորհրդի նախագահը պետք է պարտադիր իրավաբան լինի: Իրավաբանական կրթություն պետք է ունենա նաև ՄԽ քարտուղարը: Հոլանդական մոդելի առանձնահատկությունն այն է, որ որոշումներ կայացնելիս Մամուլի խորհրդի անդամները հիմնվում են ոչ միայն գործող կանոնագրի, այլև բողոքների դիտարկման ընթացքում ձևավորված նոր չափանիշների վրա: Այսպիսով, այստեղ կիրառվում է նախադեպային մոտեցումը:

**Իռլանդիա** – Իռլանդիայի «Չրպարտության մասին» Ակտի համաձայն՝ դատարանները հաշվի են առնում, թե արդյո՞ք հայցի առարկա հանդիսացող լրատվամիջոցը ինքնակարգավորման համակարգի մաս է կազմել, արդյո՞ք ՉԼՄ-ի վարքագիծը դիտարկվող գործի շրջանակներում համապատասխանում է Մամուլի խորհրդի և մամուլի օմբուդսմանի

սահմանած չափանիշներին: Ընդ որում, ինքնակարգավորման մարմին է ճանաչվում այն կառույցը, որի գործունեությունը համապատասխանում է վերոհիշյալ Ակտի պահանջներին: Այսպիսով, օրենսդրորեն սահմանվում են Մամուլի խորհուրդին/խորհուրդներին ներկայացվող նվազագույն պահանջներ, ներառյալ՝ ձևավորման մեխանիզմները, բողոքների քննարկման և որոշումների ընդունման կարգը: Միաժամանակ, Մամուլի խորհուրդն իր գործառույթներն իրացնելիս լիովին անկախ է: Իռլանդիայում տարածվող ցանկացած լրատվամիջոց կարող է դառնալ ՄԽ անդամ: Այս մարմինը բաղկացած է 13 անդամներից, որոնցից յոթը ներկայացնում են հանրության, հինգը՝ սեփականատերերի և հրատարակիչների, մեկը՝ լրագրողների շահերը: Բողոքի հանգամանքներին ծանոթանալու և դրանք հետաքննելու, որոշում կայացնելու նպատակով խորհուրդը մամուլի օմբուդսման է նշանակում: Եթե հարցը նրա մակարդակով չի լուծվում, ապա այն ներկայացվում է ՄԽ-ում քննելու համար:

**Բելգիա** - Ինչպես նշվել է վերը, Բելգիայում գործում են երկու Մամուլի խորհուրդներ: Դրանք համապատասխանաբար՝ ֆլամանդերեն և ֆրանսերեն լույս տեսնող տպագիր մամուլի ինքնակարգավորման մարմիններ են: Դրանցից բացի, երկու լեզվական համայնքների համար գործում են տեսալսողական լրատվամիջոցների խորհուրդներ, որոնք քննարկում են հեռարձակողների դեմ բողոքները: ՄԽ-ները կարելի է «փակ» կառույցներ համարել, քանի որ դրանք ստեղծվել են բացառապես պրոֆեսիոնալ լրագրողական համայնքների ներկայացուցիչների կողմից: Ավելի հայտնի և ազդեցիկ է Ֆլամանդական խորհուրդը. այն ունի 18 «հիմնական» և 18 «պահեստային» անդամներ: Վերջիններս մասնակցում են նիստերին, բայց որոշումներ կայացնելիս ձայնի իրավունք չունեն:

**Բոսնիա և Հերցեգովինա** - Բոսնիա և Հերցեգովինայի մամուլի խորհուրդը Արդարադատության նախարարության կողմից գրանցված է որպես քաղաքացիական հասարակության կազմակերպություն: Այն բաղկացած է 9 հիմնական անդամից, ևս երկուսը կարող են անհրաժեշտության դեպքում փոխարինել նրանց: Հինգը պետք է ունենան լրագրողական փորձ, իսկ չորս անդամներ ընտրվում են այն անձանց շարքերից (սովորաբար՝ իրավաբաններ և գիտնականներ), ովքեր երբեք լրագրությամբ չեն զբաղվել: Նրանցից ոչ մեկը չպետք է քաղաքական գործունեությամբ զբաղվի: ՄԽ-ն և քննարկում է բողոքները (դիմողի անձնական շահագրգռվածությունը պարտադիր պայման չէ), և կարող է իր նախաձեռնությամբ (նախագահի կամ նրա տեղակալի առաջարկությամբ) որոշ հրապարակումների վերաբերյալ եզրակացություններ անել: Նախքան բողոքի վերաբերյալ սեփական որոշում կայացնելը, խորհուրդը փորձում է հաշտեցնել կողմերին:

# ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Քանի որ Մամուլի խորհուրդների առաքելության իրացման հիմնական ձևը բողոքների դիտարկումն է, առանցքային հարցերի թվում, որոնց մասին իրենք են որոշում կայացնում, պատշաճ բողոքարկողի և պատշաճ պատասխանողի որոշարկումն է: Ինչպես երևում է վերը նշված օրինակներից, տարբեր են անգամ ամենաառաջադեմ, խորը արմատներ ունեցող ինքնակարգավորման մարմինների մոտեցումները: Եվ յուրաքանչյուր դեպքի համար կան հիմքեր՝ պայմանավորված տվյալ երկրի տեղեկատվական տիրույթի կոնկրետ իրավիճակով: Միևնույն ժամանակ, առաջատար եվրոպական խորհուրդների փորձի վերլուծությունը հնարավորություն է տալիս ապագայի համար լավագույն լուծումներ գտնել:

Ինքնակարգավորման համեմատաբար նոր համակարգերի համար, որոնք ունեն իրենց գործունեության մասին հանրային իրազեկվածությունն ընդլայնելու կարիք, նպատակահարմար է համապատասխան դիմորդների որոշման սահմանափակումներից խուսափելը: Եվ լավագույն լուծում կարող է լինել ոչ միայն անհատ քաղաքացիներին, այլև բնակչության այս կամ այն խմբերի իրավունքները պաշտպանող կազմակերպություններին բողոքներ ուղարկելու իրավունք ընձեռելը: Միևնույն ժամանակ, դիմորդների դրդապատճառների հարցը արդիական է մնում, և լրատվամիջոցների կողմից Էթիկայի խախտումը պետք է այս կամ այն կերպ առնչվի բողոքները քննող մարմնին դիմած ֆիզիկական կամ իրավաբանական անձի շահերի հետ: Բացառություն կարող են լինել այն դեպքերը, երբ լրատվամիջոցից պահանջվում է ակնհայտ փաստական, տերմինաբանական, քերականական կամ նմանատիպ սխալների շտկում: Տեղին է նաև հնարավորություն ընձեռել ինքնակարգավորման մարմիններին հանդես գալու սեփական նախաձեռնությամբ՝ այս կամ այն ՉԼՄ-ի կողմից լրագրողական Էթիկայի նորմերին համապատասխանության, ինչպես նաև՝ ընդհանուր առմամբ մեղիա միջավայրում այդ համատեքստում բացասական միտումների վերաբերյալ գնահատականներով:

Ինչ վերաբերում է բողոքների պոտենցիալ օբյեկտների սահմանմանը, ապա այստեղ նույնպես եվրոպական մամուլի խորհուրդներում մոտեցումները տարբեր են. սկսած՝ երկրում գործող բոլոր լրատվամիջոցները ինքնակարգավորման համակարգի մաս ինք-

նըստինքյան ճանաչելուց մինչև միայն նրանց դեմ բողոքների դիտարկումը սահմանափակելը, ովքեր ինքնական ստորագրել են միասնական Կանոնագիրը և դրա կիրառման կանոնակարգը: Ինքնակարգավորման համեմատաբար նոր համակարգերի համար լավագույնը «հիբրիդային» մոտեցումների կիրառումն է: Լրատվական միջավայրում որակյալ լրագրության սկզբունքները տարածելու և տեղեկատվական վեճերի արտադատական լուծումների հնարավորությունների մասին հանրությանն իրազեկելու նպատակով, իմաստ ունի դիտարկել բոլոր լրատվամիջոցների հրապարակումների վերաբերյալ բողոքները: Հատկապես, եթե դրանք ազդում են սոցիալապես նշանակալի խնդիրների վրա: Միևնույն ժամանակ, քանի որ հնարավոր չէ երաշխավորել միասնական կանոնագիրը ստորագրած և համակարգից դուրս գործող ՉԼՄ-ների միանման արձագանքը ինքնակարգավորման մարմնի եզրակացություններին, նպատակահարմար է տարբերակել նաև դրանց հետեւանքները: Առաջին դեպքում առնվազն պետք է նախատեսված լինի բողոքի օբյեկտ դարձած լրատվամիջոցում եզրակացության հրապարակումը, իսկ երկրորդ դեպքում՝ այն պետք է տարածվի բոլոր առկա տեղեկատվական ալիքներով՝ լրագրողական էթիկայի խախտումների նկատմամբ հանրային պատշաճ վերաբերմունք ձևավորելու համար:

# ՄԱՄՈՒԼԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Մամուլի խորհուրդների աշխատանքի արդյունավետությունը որոշող **կարեւոր** գործոններն են դրանց ֆինանսավորման չափն ու աղբյուրները: Եվրոպական մի շարք ինքնակարգավորման մարմինների փորձի ուսումնասիրությունը տալիս է հետևյալ պատկերը<sup>4</sup>.

	Բյուջե	Բողոքների մտավոր քանակը	Անձնակազմի քանակը
<b>Ավստրիա</b>	235,000 Եվրո	300	2 լրիվ և 1 ոչ լրիվ դրույք
<b>Ադրբեջան<sup>5</sup></b>	12,000 Եվրո	400-450	4 աշխատող
<b>Բելգիա/Ֆլանդրիա</b>	200,000 Եվրո	70	1 լրիվ և 1 ոչ լրիվ դրույք
<b>Բոսնիա և Հերցեգովինա</b>	160,000 Եվրո	500	3 լրիվ դրույք 3 խորհրդատու 1 հաշվապահ
<b>Կիպրոս</b>	22,000 Եվրո	30-35	1 լրիվ և 1 ոչ լրիվ դրույք
<b>Էստոնիա</b>	11,000 Եվրո	85	1 աշխատող
<b>Ֆինլանդիա</b>	390,000 Եվրո	470	3 լրիվ և 1 ոչ լրիվ դրույք
<b>Հյուսիսային Մակեդոնիա</b>	60,000-80,000 Եվրո	100	3 աշխատող

<sup>4</sup> Նախնական տվյալները հավաքագրվել են 2017 թ. կատարված հարցման ընթացքում և թարմացվել են հետագա տարիներին:

<sup>5</sup> Ադրբեջանի մամուլի խորհրդի տրամադրած տվյալները կասկած են հարուցում AIPCE մյուս անդամների մոտ:

<b>Կոսովո (համա- ձայն ՄԱԿ-ի ԱԽ 1244 բանաձևի)</b>	70,000 Եվրո		4 աշխատող
<b>Գերմանիա</b>	700,000 Եվրո	1800-2000	10 աշխատող
<b>Իռլանդիա</b>	400,000 Եվրո	250-300	3 աշխատող
<b>Չեռնոգորիա</b>	30,000 Եվրո	45	1 աշխատող
<b>Նիդերլանդներ</b>	165,000 Եվրո	120	2 աշխատող` ոչ լրիվ դրույք 1 քարտուղար` շաբա- թական 32 ժամ+ 1 Նախագահի օգնա- կան` շաբաթական 18 ժամ
<b>Նոր Զելանդիա</b>	161,000 Եվրո	185	1 աշխատող
<b>Նորվեգիա</b>	850,000 Եվրո	400-500	5 աշխատող
<b>Ռուսաստան</b>	130,000 Եվրո	25-30	5 աշխատող
<b>Սերբիա</b>	120,000 Եվրո	120	2 լրիվ ԵԼ 2 ոչ լրիվ դրույք
<b>Շվեդիա</b>	600,000 Եվրո	500-600	2 քննիչ (Մամուլի օմ- բուղսմեն և նրա տե- ղակալ) և 2 վարչական աշխա- տող
<b>Շվեյցարիա</b>	300,000 Եվրո	80-100	Տնօրեն (100%), վար- չական հարցերով օգ- նական (40%)
<b>Միացյալ Թագա- վորություն</b>	2,800,000 Եվ- րո	30,000	22 աշխատող

Ինչ վերաբերում է ֆինանսավորման աղբյուրներին, ապա Եվրոպայի անկախ Մամուլի խորհուրդների դաշինքի 39 անդամներից (ներառյալ ասոցացվածները) 22-ն ունեն հարաբերականորեն կայուն ֆինանսական վիճակ:



- Դրանցից 11-ին ամբողջությամբ կամ գլխավորապես ֆինանսավորում են ՉԼՄ-ները (Դանիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Մեծ Բրիտանիա, Էստոնիա, Շվեյցարիա, Նոր Չեխիա):
- 4-ին ամբողջությամբ կամ գլխավորապես ֆինանսավորում է պետությունը (Ավստրիա, Կիպրոս, Ռուսաստան, Ադրբեջան):
- 3-ը՝ խառը ձևով, այսինքն՝ ֆինանսավորում են ՉԼՄ-ները և պետությունը (Գերմանիա, Ֆինլանդիա, Բելգիա):
- Եվս 4-ը ֆինանսավորվում են բազմաթիվ աղբյուրներից, ներառյալ՝ տարբեր դոնոր կազմակերպությունները (Բոսնիա և Հերցեգովինա, Սերբիա, Հյուսիսային Մակեդոնիա, Կոսովո):
- AIPCE-ի մնացած անդամները չունեն կայուն աղբյուրներ, և այս իմաստով դժվար է օրինաչափությունների մասին խոսելը:

Վերոնշյալ տվյալների համեմատությունը թույլ է տալիս մի քանի կարևոր եզրակացություն անել.

- որքան մեծ է ՉԼՄ-ների կողմից ֆինանսավորման մասնաբաժինը, այնքան բարձր է ինքնակարգավորման մարմինների ֆինանսական կենսունակությունը:

- ՉԼՄ-ների ինքնակարգավորման առաջադեմ մարմինների ֆինանսավորումն այնքան մեծ է, որքան հաճախ են նրանք բողոքներ ստանում:

- որքան մեծ է ինքնակարգավորման մարմինների աշխատակազմը, այնքան մեծ է ստացված բողոքների թիվը (թեև այստեղ կարող է հակառակ փոխկապվածություն լինել):

Միևնույն ժամանակ Մամուլի խորհուրդների պատմությունը վկայում է ֆինանսավորման աղբյուրների հետ կապված մի քանի այլ հանգամանքների մասին: Ինքնակարգավորման մարմինների անկախությունը կարող է կասկածի տակ դրվել, երբ նրանց բյուջեն համալրվում է մեկ գերիշխող աղբյուրից: Մասնավորապես, Մամուլի դեմ բողոքների բրիտանական հանձնաժողովի ճզնաժամի պատճառով, ինչի մասին նշել ենք վերը, նրա հասցեին մեղադրանքն էր, որ ի վնաս հանրային շահի և ազնիվ լրագրության սկզբունքների՝ կազմակերպությունը կանխակալ պաշտպանում է ՉԼՄ-ների շահերը: Իր հերթին, պետության կողմից ֆինանսավորման գերիշխող չափը պարունակում է տեղեկատվական

ուրրտի վերահսկողության լրացուցիչ մեխանիզմների ռիսկեր: Եթե այն երկրների համար, որտեղ կառավարությունները պատմականորեն դրական դեր են ունենում լրատվամիջոցների ազատության և անկախության հաստատման գործում, այդ ռիսկը համեմատաբար փոքր է, ապա, օրինակ, հետխորհրդային տարածքում ինքնակարգավորող մարմինների՝ պետական ֆինանսավորմանը կցված լինելը կարող է վաղ թե ուշ լուրջ խնդիրներ առաջացնել նրանց համար:

**Չետաքրքիր է նաև առաջադեմ եվրոպական Մամուլի խորհուրդների փորձը ՉԼՄ-ներից իրենց բյուջե վճարումների համար քվոտաների որոշման հարցում:**

- Դանիայում բյուջեի 50%-ն ապահովում է հանրային հեռարձակողը, 41%-ը՝ Թերթերի ասոցիացիան, 3%-ը՝ ամսագրերի հրատարակիչները, տարածաշրջանային և տեղական լրատվամիջոցները և առևտրային մամուլը:
- Նորվեգիայում 60%-ը վճարում է հրատարակիչների ասոցիացիան, 20-ական տոկոս՝ խմբագիրների կազմակերպությունը և Ժուռնալիստների միությունը:
- Շվեդիայում ՄԻՆ բյուջեի 75%-ը հատկացնում է Թերթերի հրատարակիչների ասոցիացիան (բոլոր բողոքների 90%-ը գալիս է հենց թերթերի հրապարակումներից), 5%-ը՝ Ամսագրերի հրատարակիչների ասոցիացիան, 1%-ը՝ Ժուռնալիստների միությունը և Մամուլի ազգային ակումբը, մնացած գումարը տալիս են տարբեր հիմնադրամներ:
- Իռլանդիայում 80%-ը վճարում են համազգային թերթերը, 15%-ը՝ տարածաշրջանային թերթերը, իսկ յուրաքանչյուր օկլայն հրատարակություն վճարում է ֆիքսված գումար՝ տարեկան 200 ֆունտ ստեռլինգ:

Միջին հաշվով, կանոնավոր ֆինանսավորում ունեցող Մամուլի խորհուրդներում բյուջեի 80%-ը ծախսվում է աշխատակազմի վրա, 10-ական տոկոսներ ծախսվում են գրասենյակային և այլ նպատակներով: Մամուլի խորհուրդների 65%-ը վարձատրում են բողոքարկման Հանձնաժողովների անդամներին:

# ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքնակարգավորման մարմինների կազմը – Եվրոպական առավել առաջադեմ Մամուլի խորհուրդների փորձի ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ բողոքներ քննող հանձնաժողովների՝ որպես ինքնակարգավորման համակարգերի առանցքային մասի, օպտիմալ կազմը պետք է բաղկացած լինի մեդիա ինդուստրիայի (լրատվամիջոցների ղեկավարներ), մասնագիտական (հեղինակավոր լրագրողներ) և լայն հասարակական ներկայացուցիչներից: Հաշվի առնելով, որ բողոքները քննելիս կարևոր է դրանց մոտենալ ոչ միայն էթիկական, այլև իրավական տեսակետից, անհրաժեշտ է, որ հանձնաժողովի կազմում լինի նաեւ տեղեկատվական վեճերի հարցով դատական պրակտիկային ծանոթ իրավաբան: Մասնավորապես, դա կարելի է ապահովել հանրության լայն շերտերին հատկացված քվոտայի միջոցով:

**Տարբեր համակարգերի համագոյակցությունը**- Թեև Մամուլի խորհուրդները և դրանց հավասարեցված մարմինները կազմում են ինքնակարգավորման համակարգերի առանցքը, շատ երկրներում իր արդյունավետությունն է հաստատել ազգային օմբուդսմանի ինստիտուտը, որը, որպես կանոն, անմիջականորեն փոխգործակցում է ՄԻ-ի հետ: Սա կարելի է տեսնել Շվեդիայի և Իռլանդիայի վերը բերված օրինակներում: Նման պրակտիկա կա նաև Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Սակայն, «ազգային օմբուդսման» հասկացությունը չպետք է շփոթել առանձին լրատվամիջոցների օմբուդսմանների հետ, որոնք նշանակված են համապատասխան ընկերությունների ղեկավարության կողմից՝ խմբագրության և լսարանի միջև միջնորդի դեր խաղալու և հնարավոր կոնֆլիկտները լուծելու, քննադատություններին արձագանքելու համար: Բրիտանական «Guardian»-ն իր օմբուդսմանի համար շրջանառել է «ընթերցողի խմբագիր» հասկացությունը: Ինչպես Մամուլի խորհրդի դեպքում է, «ներքին օմբուդսմանը», որպես կանոն, հիմնվում է տվյալ լրատվամիջոցի կողմից ընդունված լրագրողական Էթիկայի Կանոնագրի վրա:

Եթե Եվրոպայում ավելի լայն տարածում են գտել Մամուլի խորհուրդները, ապա, օրինակ, ԱՄՆ-ում ՉԼՄ-ների ինքնակարգավորումն իրականացվում է հիմնականում օմբուդսմանների միջոցով: Այնուամենայնիվ, երկու տարբեր համակարգերը չեն հակասում միմյանց և կարող են հաջողությամբ գոյակցել: Այս առումով հատկանշական է Դանիայի օրինակը, որտեղ գործում են և արդյունավետ Մամուլի խորհուրդը, և բոլոր առաջատար լրատվամիջոցներում՝ օմբուդսմանները: Այս կամ այն լրատվամիջոցի հետ իրենց վեճը

լուծելու համար բացի դատարան դիմելուց, քաղաքացիներն այստեղ կարող են ընտրել նաեւ Մամուլի խորհրդին կամ «ներքին օմբուդսմանին» դիմելու տարբերակների միջեւ: Երկու ինստիտուտները մի կողմից մրցակցում են, բայց, մյուս կողմից, լրացնում են միմյանց: Հենց այս տեսակի ինքնակարգավորման համակարգի կառուցումն է (այսպես կոչված՝ «խառը մոդելը»), որ ամենահեռանկարայինն է թվում այն երկրների համար, որտեղ լրատվամիջոցների՝ հասարակությանը հաշվետվողականության հայեցակարգերը մշակման կամ ներդրման փուլում են: Այս երկու ինստիտուտները կոչված են ձևավորելու հանրային վստահությունն ինչպես ընդհանուր առմամբ պրոֆեսիոնալ մեդիա ոլորտի (ինչպես Մամուլի խորհուրդների դեպքում է), այնպես էլ առանձին լրատվամիջոցների նկատմամբ (ինչպես օմբուդսմանների դեպքում է):

**Համակարգավորում. պլյուսներ և մինուսներ** - Դժվար է ակնկալել, որ «գրոյից» ստեղծվող այս կամ այն մեդիա ինքնակարգավորման ինստիտուտը երաշխավորված կկայանա: Ուստի ՉԼՄ-ների հաշվետվողականության համակարգերի ներդրման սկզբնական փուլում «մենաշնորհները» կարող են գործընթացը փակուղի տանել: Մասնավորապես լուրջ ռիսկերի հետ են կապված օրենսդրական կարգավորման շրջանակներում միասնական Մամուլի խորհուրդ ստեղծելու փորձերը: Ազատ և որակյալ մամուլի ամուր ավանդույթներով երկրներում (Դանիա, Իռլանդիա) հաջողությամբ կիրառվող համակարգավորման տարբեր ձևերը կարող են այլ սոցիալ-քաղաքական պայմաններում (առանց ժողովրդավարական ինստիտուտների ավանդույթների և կայացած սոցիալական պատասխանատվության մթնոլորտի) հանգեցնել մոդելի վարկաբեկմանը:

Միաժամանակ պետությունը, կառուցողական շահագրգռվածության և բարի կամքի առկայության դեպքում կարող է որոշակի դեր խաղալ ինքնակարգավորման համակարգի զարգացման գործում: Մասնավորապես, օրենսդրական -նորմատիվային մակարդակում կարող են ամրագրվել որոշակի ստանդարտներ համապատասխան կառույցների համար, միջոցներ՝ խթանելու ՉԼՄ-ների մասնակցությունը հասարակության առջև հաշվետվողականության մեխանիզմների ներդրման նախաձեռնություններին: Այս միջոցառումներից մեկը կարող է լինել հանրային հեռարձակող ընկերությունում օմբուդսմանի ինստիտուտի ստեղծումը, որը օրինակ կծառայի ամբողջ մեդիա միջավայրի համար (Էստոնիայի փորձը): Մյուսը կարող է լինել անկախ և որակյալ լրատվամիջոցների աջակցության ոչ կառավարական հիմնադրամի ստեղծմանը նպաստելը, որն, ի թիվս այլ հարցերի, կլուծեր ինքնակարգավորող մարմինների համաֆինանսավորման հարցը: Սկզբնական շրջանում ընդունելի կլիներ ստեղծել Մամուլի խորհուրդների գործառույթներով մի քանի

կառույցներ, որպեսզի հետազայում մնա կամ մասն առավել կենսունակները: Նման նախադեպ նկատվում է, օրինակ, Մեծ Բրիտանիայում, որտեղ Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովի լուծարումից հետո IMPRESS-ը (Independent Press Monitor) և IPSO-ն (Independent Press Standards Organization) միցում են նրան «փոխարինողի» դերի համար: Բացի այդ, հեռարձակող լրատվամիջոցների դեմ այս երկրի քաղաքացիների բողոքները դիտարկում է հաղորդակցական ոլորտի ազգային կարգավորող Ofcom-ը: Լրագրության բարձր ստանդարտների ապահովման սեփական համակարգ է գործում BBC-ում:

**Կամավոր, թե՛ «պարտադրված»** - Լրատվամիջոցների ինքնակարգավորման համակարգի ձևավորման հիմնական գործոնների հետ մեկտեղ, այս ուսումնասիրության ընթացքում անդրադարձ եղավ մի շարք սպեցիֆիկ հարցերի, որոնց պատասխանները միանշանակ չեն, բայց կարևոր են, այդ թվում՝ Հայաստանում, օպտիմալ մոդելներ ընտրելու համար: Մասնավորապես, դրանցից մեկը վերաբերում է ինքնակարգավորման մաս կազմող լրատվամիջոցների շրջանակի սահմանմանը: Որոշ երկրների փորձի համաձայն (օրինակ՝ ինչպես Իռլանդիայում է, Ֆինլանդիայում, Իսպանիայում, Մեծ Բրիտանիայում, Սերբիայում) համակարգում ընդգրկված են միայն կամավոր սկզբունքներով միացածները, մյուս երկրներում (Դանիա, Ֆրանսիա, Կիպրոս) ինքնակարգավորման մարմինների լիազորություններն ինքնաբերաբար տարածվում են բոլոր ՉԼՄ-ների վրա: Միևնույն ժամանակ եվրոպական շատ երկրներում, որտեղ գործում է կամավորության սկզբունքը, ինքնակարգավորման համակարգին միացել է լրատվամիջոցների մեծ մասը: Մեծ Բրիտանիայում նրանք ունեն ընտրության հնարավորություն վերը նշված երկու կառույցների միջև: Ռուսաստանում գործում են մյուս բոլոր երկրներից տարբերվող մեխանիզմներ. Մամուլի դեմ բողոքների հանրային կոլեգիան Կանոնագիր չունի և հենվում է էթիկայի համընդհանուր ճանաչված սկզբունքների վրա, ընդունում է բողոքներ ռուսաստանյան ցանկացած լրատվամիջոցի դեմ, որն, իր հերթին, կարող է համաձայնել համագործակցել կոնկրետ տեղեկատվական վեճի շրջանակներում: Եվ սա չի ենթադրում համագործակցության պարտադիր շարունակություն հետազայում:

**Ինքնակարգավորմանը մասնակցելու խթանները** - Ոչ պակաս կարևոր թեմա է ինքնակարգավորմանը մասնակցելու խթանների առկայությունը: Իռլանդիայում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցներն իրենց դեմ դատական հայցերը քննելու ժամանակ օգտվում են որոշակի արտոնություններից: Սերբիայում պետության կողմից այս կամ այն լրատվամիջոցի ֆինանսա-

վորման հարցով որոշում կայացնելիս կիրառվում է Մամուլի խորհրդի հետ խորհրդակցությունների պրակտիկան: Իսպանական Կատալոնիա տարածաշրջանում սուբսիդիաների բաշխման ժամանակ Լրագրողական Էթիկայի կանոնագիրը ստորագրողները որոշ ժամանակ առաջ առավելություն էին ստանում, մինչդեռ Ֆրանսիայում նման հնարավորությունները դիտարկվում են ապագայի համար: Լյուքսեմբուրգում Մամուլի խորհուրդը մարմին է, որն օրենսդրական մակարդակով մամուլի քարտեր տրամադրելու լիազորություն ունի, ինչն այդ մարմինը կապում է երկրի բոլոր լրատվամիջոցների հետ: Ֆինլանդիայում, Բելգիայում, Կիպրոսում և Եվրոպական այլ երկրների մեծ մասում որևէ արտոնություն նախատեսված չէ:

**Որակյալ լրագրությանն աջակցելու քաղաքականությունը** - Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2021-2025 թթ. ծրագրում ներառված ինքնակարգավորման/համակարգավորման խթանման հայեցակարգի մշակումը, առանձնահատուկ հետաքրքրություն էր ներկայացնում նմանատիպ փորձն այլ երկրներում: Ինքնակարգավորման ոլորտում պաշտոնական քաղաքականության իրականացման ձևերից մեկը ինքնակարգավորող մարմինների ճանաչումն է օրենսդրական մակարդակով (Դանիա, Իռլանդիա և մի շարք այլ երկրներ): Յուրահատուկ փորձ ունի այս հարցում Միացյալ Թագավորությունը, որտեղ Ինքնակարգավորման թագավորական խարտիան ստեղծեց մամուլի ճանաչման հատուկ անկախ հանձնաժողով, սակայն եթե IMPRESS-ը շահագրգռված է ճանաչվելու այս մարմնի կողմից, ապա IPSO-ն՝ ոչ: Մեծ Բրիտանիայի մեդիա ինդուստրիայի զգալի մասը մտահոգություն է հայտնել ճանաչման ընթացակարգի վերաբերյալ, և այդ պատճառով գերադասել է լինել IPSO համակարգի մասը: Մի շարք երկրներում պետական քաղաքականությունն արտահայտվում է ինքնակարգավորման համակարգերի ֆինանսական աջակցության տեսքով (Գերմանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա և այլն): Բավականին տարածված է խթանման երկու ձևերի կիրառման պրակտիկան՝ ինչպես պաշտոնական ճանաչման, այնպես էլ ֆինանսավորման:

**Պե՞տք է հրապարակվեն մարմինների փաստաթղթերը**- Եվրոպական երկրներում բավականին տարբեր մոտեցումներ կան նաև ՀԼՄ-ներում կանոնագրերի և իրենց վերաբերող բողոքների եզրակացությունների հրապարակման վերաբերյալ: Բրիտանական IMPRESS-ը կիրառում է բոլոր հիշատակվող փաստաթղթերի հրապարակման պրակտիկան իր համակարգին միացած լրատվամիջոցների համար: IPSO-ն պարտավորեցնում է հրապարակել Կանոնագրի միայն այն դրույթները, որոնք բացատրում են բողոքներ ներկայացնելու կարգը, սակայն եզրակացությունների հրապարակման

հարցը որոշում է հենց ինքը՝ լրատվամիջոցը: Դանիայում Կանոնագրի հրապարակումը պարտադիր չէ, իսկ եզրակացությունների վերաբերյալ Մամուլի խորհուրդը որոշում է կայացնում յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար: Ֆինլանդիայում, Սերբիայում և Կատալոնիայում պարտադիր է միայն եզրակացությունների հրապարակումը: Բելգիայում Կանոնագրի հրապարակում չի նախատեսվում, իսկ ինչ վերաբերում է եզրակացություններին, ապա Մամուլի խորհուրդը լրատվամիջոցներից ակնկալում է դրանց հիմնական դրույթների հրապարակումը: Մոտավորապես նույն մոտեցումն է կիրառվում Ֆրանսիայում: Ինչպես նշվել է վերը, Ռուսաստանի ինքնակարգավորող մարմինը Կանոնագիր չունի, իսկ բողոքի առարկա դարձած ՉԼՄ-ում եզրակացության հրապարակումը բացառապես կամավոր գործ է: Կիպրոսի ՉԼՄ-ների դեմ բողոքների հանձնաժողովը նշված փաստաթղթերը հրապարակելու պարտավորություն չի նախատեսում:

**Լրագրողների վարքագիծը սոցցանցերում-** Մամուլի խորհուրդների մոտեցումները տարբերվում են նաև սոցիալական ցանցերում լրագրողների վարքագծի գնահատման հարցում: Այդ առումով Եվրոպայի անկախ Մամուլի խորհուրդների դաշինքի անդամներին կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի: Առաջին խմբում այն մարմիններն են, որոնք սոցցանցերում նյութերի վերաբերյալ բողոքներ չեն դիտարկում: Երկրորդ խմբում ինքնակարգավորման մարմիններն են, որոնք ընդունում են միայն ՉԼՄ-ների սոցցանցային պաշտոնական էջերում տեղադրված հրապարակումների դեմ բողոքներ: Երրորդ խումբն այն Մամուլի խորհուրդներն ու նրանց համարժեք կառույցներն են, որոնք դիտարկում են սոցցանցային ցանկացած բովանդակության հետ կապված բողոքները, եթե այդ բովանդակության հեղինակն իրեն որպես պրոֆեսիոնալ լրագրող նույնականացնող օգտատեր է:

**Լրատվամիջոցների ինքնակարգավորումը և թափանցիկությունը**

- Հայաստանի համար արդիական է սեփականատերերի և ֆինանսավորման աղբյուրների թափանցիկության հարցը, ինչպես նաև՝ թե որքանով կարող է դրան նպաստել ինքնակարգավորման համակարգը: Եվրոպական երկրների մեծ մասում թափանցիկության թեման Մամուլի խորհուրդների օրակարգի մաս չի կազմում: Սակայն մի շարք ինքնակարգավորող մարմիններ պահանջում են այն տեղեկատվության ներկայացումը, որը կարևոր է իրենց իսկ գործունեության համար: Մասնավորապես, Դանիայում պարտադիր է պատասխանատու խմբագրի և հրատարակչի վերաբերյալ տվյալների հրապարակումը:

## Փաստերի ստուգումը և ինքնակարգավորման մարմինները - Հաշվի

առնելով մեդիա տիրույթում ֆակտչեքինգով (ՉԼՄ-ների կողմից տարածվող փաստերի ստուգմամբ) զբաղվող հարթակների ակտիվ տարածումը, ինչպես նաև հակասությունները, որոնք վերջերս ի հայտ են եկել ավանդական լրատվամիջոցների և փաստերը ստուգողների միջև, որոշակի հետաքրքրություն է առաջացնում ինքնակարգավորող մարմինների՝ դրանց, որպես իրենց գործունեության օբյեկտ, ընկալումը: Այստեղ տարբեր մոտեցումներ են կիրառվում նույնիսկ մի երկրի սահմաններում: IMPRESS-ը հնարավոր է համարում իր կանոնակարգերի փոփոխությունը, ինչը թույլ կտա դիտարկել նշված հարթակների դեմ բողոքները: Բրիտանական մեկ այլ կազմակերպությունը՝ IPSO-ն, կտրականապես սահմանափակում է իր գործունեությունը ավանդական թերթերով, ամսագրերով և դրանց օնլայն տարբերակներով: Այսպիսի մոտեցում կա մի շարք այլ երկրներում (Գերմանիա, Իռլանդիա): Սկանդինավյան երկրները պատճառ չեն տեսնում, թե ինչու չեն կարող դիտարկվել բողոքներ փաստեր ստուգողների դեմ, եթե նրանք ինքնակարգավորման համակարգի բաղադրիչը հանդիսացող մեդիա տիրույթի մաս են ընկալվում: Բելգիայի (Ֆլանդրիայի) Մամուլի խորհուրդն այս ուսումնասիրության անցկացման ժամանակ արդեն իսկ քննարկել էր փաստերի ստուգման հարթակների դեմ երեք բողոք, և վերջիններս հրապարակել էին պահանջվող ուղղումները: Ֆրանսիայի լրագրության և ՉԼՄ-ների դեռնստոլոգիայի խորհուրդն (CDJM) այս հարցին մոտենում է բողոքի առարկայի մասնագիտական պատկանելության դիտանկյունից, այսինքն՝ եթե փաստեր ստուգողների հարթակը ստեղծել են լրագրողները կամ նյութը հրապարակվել է լայն պրոֆիլի ՉԼՄ-ում, ապա հարցը կարող է դիտարկվել: Նման մոտեցում է կիրառվում Ռուսաստանում. այս կարգի բողոքը կարող է դիտարկվել, եթե այն հասցեագրված է ՌԴ ՉԼՄ-ների մասին օրենքին համապատասխան գրանցում ունեցող կազմակերպությանը:

## Կանոնագրերը խախտած ՉԼՄ-ների նկատմամբ վերաբերմունքը -

Հայաստանում ինքնակարգավորման (համակարգավորման) համակարգերի արդյունավետության վերաբերյալ քննարկումների առարկան ներառում է պատասխանատվության ենթարկելու թեման իրենց ստորագրած կանոնագիրը խախտող լրատվամիջոցների նկատմամբ: Հազվագյուտ դեպքերում է նման իրավունք, այդ թվում՝ ֆինանսական բնույթի պատժամիջոցներ, ամրագրված Մամուլի խորհուրդներին: Միեւնույն ժամանակ, ինքնակարգավորման մարմինները չեն կարող որոշումներ կայացնել հայտատուի կրած ֆինանսական վնասների փոխհատուցման վերաբերյալ: Ինչ-որ առումով բացառություն են երկու բրիտանական կառույցները, որոնք կարող են իրենց եզրակացություններում



նշել համապատասխան արբիտրաժային իրավասություններով օժտված այլ մարմինների կողմից փոխհատուցում տրամադրելու նպատակահարմարությունը:

Հայաստանի ՉԼՍ-ների Էթիկայի դիտորդ մարմինը, իր հիմնադրի՝ Ինքնակարգավորման նախաձեռնության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ, 2021 թ. մայիսից իրավասու է քննարկել և որոշումներ կայացնել ոչ միայն լրատվամիջոցների, այլև պաշտոնատար անձանց դեմ, տեղեկատվական վեճերի մասով, որոնց կողմերից մեկը լրատվամիջոցների ներկայացուցիչներն են: Ինչպես ցույց է տալիս այս ուսումնասիրությունը, Եվրոպայում գործող Մամուլի խորհուրդներից և ոչ մեկը չի նախատեսում նման ընթացակարգ: Միևնույն ժամանակ, ինքնակարգավորման մարմինները, որոնք մեծ նշանակություն են տալիս խոսքի և տեղեկատվության ազատության պաշտպանության առաքելությանը (Կրաստան, Լյուքսեմբուրգ), կարող են իրենց հրապարակային դիրքորոշումն արտահայտել այս ազատությունների դեմ ուղղված պետական պաշտոնյաների և քաղաքական գործիչների գործողությունների վերաբերյալ:

Կորոնավիրուսի համաճարակը, պատերազմները, որոնց բախվել են այն երկրները, որոնց ինքնակարգավորման մարմինները Եվրոպայի անկախ Մամուլի խորհուրդների դաշինքի անդամ են, ակտուալացրել են Էթիկական վարքագծի խնդիրները ծայրահեղ իրավիճակներում: Սակայն Կանոնագրերն ավանդաբար նկարագրում են «նորմալ» պայմաններում աշխատելու կանոնները և չեն նախատեսում լրացուցիչ սահմանափակումներ կամ, ընդհակառակը, հանդուրժողականությունն արտակարգ իրավիճակների համար: Լավագույն դեպքում լրագրողներին խորհուրդ է տրվում տեղեկացնել իրենց լսարանին պաշտոնապես հայտարարված պատերազմական կամ արտակարգ դրության ժամանակ իրենց հրապարակումների բովանդակության վրա ազդող սահմանափակումների մասին (Կատալոնիայի Մամուլի խորհուրդ, ռուսաստանյան Մամուլի դեմ բողոքների հանրային կոլեգիա): Դրա հետ մեկտեղ լրատվամիջոցներն արմատապես վերանայում են իրենց խմբագրական քաղաքականությունը պատերազմների ժամանակ, որոնց մեջ ներգրավված են իրենց երկրները, Ուկրաինայի իրադարձությունների համատեքստում սոցցանցերի վարչակազմերը քննարկում են իրենց կանոնների փոփոխության հարցը: Այդ հանգամանքները դրդում են մեկ անգամ ևս անդրադառնալ հասցեական Էթիկական նորմերի թեմային՝ արտակարգ իրավիճակներում լրագրողների աշխատանքի համար:

Միջազգային համագործակցություն՝ ուղղված ՉԼՄ-ների ինքնակարգավորման խթանմանը - Այս ուսումնասիրության մեջ ամփոփված միջազգային փորձի հետագա վերլուծությունը կարող է նպաստել ՉԼՄ-ների ինքնակարգավորման մոդելների կատարելագործմանը ինչպես Հայաստանում, որտեղ համապատասխան հայեցակարգ է մշակվում պետական մակարդակով, այնպես էլ այլ երկրներում, որտեղ հասարակությանը լրատվամիջոցների հաշվետվողականության համակարգերը ձևավորման փուլում են: Ինչպես նշել ենք վերը, Եվրոպայի անկախ Մամուլի խորհուրդների դաշինքը ամենաարդյունավետ հարթակն է ինքնակարգավորման ոլորտում գործնական մտքերի փոխանակման համար:

AIPCE-ն հռչակում է իր գործունեության հիմքում ընկած հետևյալ սկզբունքները.

- ՉԼՄ-ներում խմբագրական բովանդակության կարգավորումը պետք է անկախ լինի քաղաքական իշխանությունից:
- Լրագրողական Էթիկայի կանոնագրերի մշակումն ու կիրառումը լրագրողների և հրատարակիչների գործն է, որոնք հաշվի են առնում հասարակական ընկալումները, բայց ոչ քաղաքական իշխանությունների շահերը:
- ՉԼՄ-ի բովանդակության կարգավորումը, լինի այն իր ծածկույթով ազգային կամ տարածաշրջանային, պետք է հաշվի առնի ազգային մշակույթների տարբերությունները:
- Անհնար է ձևավորել Էթիկայի համընդհանուր կանոնագրեր, ուստի պետք է մերժվի վերազգային կանոնագրերի և ինքնակարգավորման մարմինների պարտադրումը ինչպես Եվրոպական, այնպես էլ գլոբալ մակարդակներում:

Բացի AIPCE-ից, լրագրողական Էթիկայի ոլորտում ինքնակարգավորման ինստիտուտների խթանման ուղղությամբ միջազգային համագործակցության որոշակի փորձ է կուտակվել ՉԼՄ-ների ինքնակարգավորման մարմինների Ցանցում, որը միավորում է հետխորհրդային յոթ երկրների համապատասխան կառույցները: Այն ստեղծվել է 2011թ. որպես AIPCE-ի ներսում յուրատեսակ «ստորաբաժանում», որը նախատեսված է մասնակից երկրների ինքնակարգավորման մարմինները Եվրոպական առաջատար Մամուլի խորհուրդների մակարդակին «բարձրացնելու» համար: Ցանցի ներսում փոխգործակցության նորարարական ձևերից մեկը դարձել է ՉԼՄ-ների դեմ միջերկրային բողոքները

բոլոր մասնակից երկրների ներկայացուցիչներից կազմված խորհրդատվական հանձնաժողովում քննելու և համապատասխան կարծիքներ մշակելու պրակտիկան:

**Կախվածությունը հարակից ոլորտներից** - Ինքնակարգավորման փորձի այս և նախորդ ուսումնասիրությունները, որոնք իրականացվել են ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային, միջազգային մակարդակներում<sup>6</sup>, ցույց են տալիս համալիր մոտեցման կարևորությունը որակյալ ՉԼՄ-ների հատվածի ամրապնդման համար: Համապատասխանաբար՝ ինքնակարգավորման համակարգի զարգացումը մեծապես պայմանավորված է հարակից ոլորտների կատարելագործմամբ: Մասնավորապես, հասարակության կողմից ինքնակարգավորման օգտակարության ընկալումն ու գնահատումն անմիջականորեն կապված է բնակչության մեղիա գրագիտության մակարդակի հետ: Մեղիա օրենսդրության առաջադեմ համակարգը և տեղեկատվական վեճերի հարցով որակյալ դատական պրակտիկան նպաստում են այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ ինքնակարգավորումը կարող է գտնել իր տեղը և ներդաշնակորեն փոխազդել պետական կարգավորման հետ: Լրագրողական կրթության մակարդակի բարձրացումը նպաստում է մեղիա միջավայրում մասնագիտական ստանդարտների բարձրացմանը և թույլ է տալիս ինքնակարգավորման համակարգին բարձրացնել լրատվամիջոցների ներկայացուցիչներից էթիկական ակնկալիքների նշածողը: Լրատվամիջոցների շուկայի նկատմամբ եւ դրա սուբյեկտների միջև քաղաքակիրթ հարաբերությունների ստեղծմանն ուղղված պետական քաղաքականությունը հող է ստեղծում անկախ ՉԼՄ-ների զարգացման համար, որոնք, ի տարբերություն կողմնակալ քարոզչամիջոցների, հակված են գործել համաձայնեցված կանոնների շրջանակներում: Եվ եվրոպական Մամուլի խորհուրդների փորձը հաստատում է, որ ինքնակարգավորումը հաջողվում է այնտեղ, որտեղ թվարկված հարակից ոլորտները նույնպես ապացուցել են իրենց կայացվածությունը: Սա առաջին հերթին վերաբերում է Սկանդինավիայի երկրներին, Մեծ Բրիտանիային, Բելգիային, Նիդերլանդներին, Գերմանիային... ՉԼՄ-ների ինքնակարգավորման հենց նրանց մոդելներն են արժանի հատուկ ուշադրության:

<sup>6</sup> Ольга Мамонтова, Советы по прессе в Европе: анализ основных параметров деятельности, классификация, модели (2013) - <https://presscouncil.ru/teoriya-i-praktika/knigi-i-stati/1915-sovety-po-pressе-v-evrope-analiz-osnovnykh-parametrov-deyatelnosti-klassifikatsiya-modeli>, Adeline Hulin, "Statutory media self-regulation: beneficial or detrimental for media freedom?" (2014) - <https://core.ac.uk/download/pdf/45685055.pdf>, Media self-regulation in South East Europe: guide to best practices for the digital age (2019), <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000367835.locale=fr>: